ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԴԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

N.-11-Ն

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2011թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ-Հաստատել համայնքի 2012թ. տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների / ներառյալ ոչ հիմնական / շինարարության թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է
   ա/ մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական / ամառանոցային / տների ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական արտադրական նշանակության օբյեկտների համար- 7500 դրամ:
   բ/ 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար- 25000 դրամ:
2. Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար
   ա/ մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար- 1500 դրամ:
   բ/ 20քմ և ավել ընդհանուր մակերես ունեցող ունեցող օբյեկտների համար- 2500 դրամ:
3. Համայնքի վարչական տարածքում շենքերի և շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել- 2500 դրամ:
4. Օբյետի ընդհանուր մակերեսի ավելացումը կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության համար տեղական տուրք սահմանել-3000 դրամ:
5. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանվում է
   1. Ոգելից խմիչքի վաճառքի թույլատրության համար հիմնական և ոչ հիմնական շինություններում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար -3000 /երեք հազար /

2. Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլատրության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար -3000 /երեք հազար/

6. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանվում է- 500 դրամ:

7. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու հետ վերցնելու և վարձակալական հիմունքներով տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել- 500 դրամ:

8. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու համար մասնակիցներից վճար սահմանել-3000 դրամ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ս. Հովհաննիսյան
Մ. Սարգսյան
Ա. Խաչատրյան
Վ. Հովհաննիսյան
Ա. Հովհաննիսյան

Համայնքի ղեկավար Ս.Սրապոյան

բանտուրար/ Է. Հովհաննիսյան